## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 11.12.2025թ. N 520/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 25.12.2025թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ձ.Աղաջանյանը, Ա.Նազարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

**Օրակարգ**
**Հայտերի բացման և գնահատման մասին**

**1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները**

ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Գալստյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1) «ՆԵՔՍԱ» ՍՊԸ-ն (ք.Երևան, Գրիգոր Լուսավորչի-7)
2) «ՍՄՄ Տեխ» ՍՊԸ-ն (ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ-26/11)

**2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

| ՀՀ | Չ/Հ | Մասնակիցների անվանումները | Ապրանքի անվանումը | Ներկայացրած գները ՀՀ դրամ | | | պլանավորված ընդհանուր գինը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ | ԱԱ Հ | ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ | |
| 1 | 1 | «ՍՄՄ Տեխ» ՍՊԸ | Անխափան սնուցման աղբյուրներ | 3 150 000 | 20% | 3 780 000 | 2 590 000 |
| 2 | | «ՆԵՔՍԱ» ՍՊԸ | | 25 000 000 | 20% | 30 000 000 | |
| 1 | 2 | «ՍՄՄ Տեխ» ՍՊԸ | Գունավոր տպիչներ-1 | 854 162.5 | 20% | 1 024 995 | 1 025 000 |
| 2 | | «ՆԵՔՍԱ» ՍՊԸ | | 25 000 000 | 20% | 30 000 000 | |
| 1 | 3 | «ՆԵՔՍԱ» ՍՊԸ | Գունավոր տպիչներ-2 | 25 000 000 | 20% | 30 000 000 | 1 154 000 |

**3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին**

Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ չկան, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների վերաբերյալ տրվել է համապատասխան պարզաբանում:

**4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. Էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով 2-րդ չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած «ՄՄ Տեխ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

2. Մասնակիցների կողմից հայտով 1-ին և 3-րդ չափաբաժինների համար ներկայացրած գները գերազանցել են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը և գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով ավտոմատ կերպով մերժվել են:

## 5. Հանձնաժողովը որոշեց՝

1. «ՄՄ Տեխ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Հաշվի առնելով, որ «ՄՄ Տեխ» ՍՊԸ-ի կողմից հայտով 2-րդ չափաբաժնի համար ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝ «ՄՄ Տեխ» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնով ճանաչել ընտրված մասնակից:
3. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6 ծածկագրով (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի 2-րդ չափաբաժինը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «ՄՄ Տեխ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «ՄՄ Տեխ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:
4. ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի 1-ին և 3-րդ չափաբաժինները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյան

Անդամներ՝ Ջ.Աղաջանյան

Ա.Նազարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան